ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ ԳԵՎՈՐԳԻ

ԳՈՒՅՔԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ

Ը.00.01- «Ընդհանուր տնտեսագիտություն» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2019

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում։

Գիտական ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Մարկոսյան Աշոտ Խաչատուրի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Ղարիբյան Գրիշա Ալեքսանի

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Թավադյան Միխայիլ Նավասարդի

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը տեղի կունենա 2020թ. փետրվարի 17-ին ժամը 13:30-ին, Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի տնտեսագիտության թիվ 015 մասնագիտական խորհրդի նիստում։

Հասցե՝ 0009, ք. Երևան, Աբովյան փող. 52։

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում։

Սեղմագիրն առաքված է 2019թ. դեկտեմբերի 25-ին։

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
տեխնիկական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր՝ Ա. Հ. Առաքելյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը պայմանավորված է հասարակական հարաբերությունների զարգացմամբ, որոնց էվոլյուցիան անփոփոխ չի թողնում մարդու կենսագործունեության տարբեր ոլորտների զարգացման բնույթը: Ընդ որում, փոփոխությունները գույքային հարաբերություններում առավել արտահայտված են դառնում սոցիալական, քաղաքական, իրավական և, անշուշտ, տնտեսական տեսանկյունից:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև արտաքին և ներքին բնույթի գործոններով: Արտաքին գործոնները կապված են առաջին, գիտատեխնիկական առաջընթացի հետ և իրենց արտահայտությունն են գտնում, մասնավորապես, մտավոր սեփականության նշանակության բարձրացման մեջ, երկրորդ, շուկայական հարաբերությունների զարգացման հետ, ինչն ուսումնասիրվող հիմնախնդրի համատեքստում իր արտահայտությունն է գտնում բիզնես փոխհարաբերությունների, պետական մասնավոր գործընկերության նոր ձևերի զարգացման մեջ: Ներքին գործոնները Հայաստանում ձևավորվել են տրանսֆորմացիոն գործընթացների ազդեցությամբ՝ եկամուտների շերտավորման կտրուկ խորացման և գույքային անհավասարության արդյունքում:

Գույքային հարաբերությունների առանձնահատկությունների և բովանդակային փոփոխությունների վերլուծությունը արտացոլում է տնտեսական խնդիրները և դրանց լուծման հնարավորությունները առանձին երկրներում, թույլ է տալիս կանխատեսել իրականացվող բարեփոխումների արդյունքները, ինչպես նաև բացահայտել երկրների տնտեսական զարգացման ներուժը:

Հետազոտության օբյեկտը գույքային հարաբերություններն են: **Հետազոտության առարկան** գույքային հարաբերությունների զարգացումն է ՀՀ-ում՝ դրանց իրացման և պետական կարգավորման գործընթացում:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել գույքային հարաբերությունների էությունը, դրանց զարգացման օրինաչափությունները՝ հաշվի առնելով պատմական և սոցիալ-տնտեսական հետագծերը, և դրա հիման վրա ցույց տալ գույքային հարաբերությունների կարգավորման ուղղությունները ՀՀ-ում, որոնք միտված են գույքային հարաբերությունների բացասական դինամիկան սահմանափակելուն:

Ատենախոսության նպատակին հասնելու համար սահմանվել են հետազոտության հետևյալ խնդիրները.

- ✓ ուսումնասիրել «գույք» հասկացությունը, գույքային հարաբերությունները,
- ✓ բացահայտել գույքային հարաբերությունների առանձնահատկությունները և որոշել դրանց տեղը հասարակական հարաբերությունների համակարգում,
- ✓ վերլուծել հասարակական տնտեսական ֆորմացիաների առանձնահատկությունները գույքային հարաբերությունների տեսանկյունից,
- ✓ ներկայացնել գույքի տեսակների բազմակողմ դասակարգումը,
- ✓ ցույց տալ ոչ նյութական օբյեկտների նկատմամբ գույքային հարաբերությունների իրացման և դրանց վերարտադրության առանձնահատկությունները ժամանակակից պայմաններում,
- ✓ դիտարկել գույքային հարաբերությունների իրացումը դինամիկայում և առաջարկել դրանց զարգացումը բնութագրող ցուցանիշներ,
- ✓ պետության տնտեսական գործառույթների համակարգում դիտարկել հարկային համակարգի որպես գույքային հարաբերությունների զարգացումը կարգավորող գործիքի դերը,
- ✓ բացահայտել գույքային հարաբերությունների զարգացման առանձնահատկությունները, դրանց դրսևորման նոր ձևերը, որոնք համապատասխանում են ժամանակակից տնտեսական պայմաններին,
- ✓ առաջարկել գույքային հարաբերությունների զարգացման պետական կարգավորման ուղղությունները,
- ✓ բնութագրել գույքային հարաբերությունների զարգացման առանձնահատկությունները ՀՀ-ում,
- ✓ բացահայտել գույքային հարաբերությունների զարգացման գործոնները և ներկայացնել նոր որակի գույքային հարաբերությունների պետական կարգավորման քաղաքականությունը ՀՀ տնտեսությունում:

Հետազոտության գիտական նորույթը: Ատենախոսության գիտական արդյունքը կայանում է գույքային հարաբերությունների գիտական հիմնավորված հետազոտության մեջ, որը զարգացնում է գույքային հարաբերությունների բովանդակության, էվոլյուցիայի և դինամիկայի մասին պատկերացումները ժամանակակից պայմաններում: Աշխատանքում գիտական նորույթ պարունակող հիմնական դրույթները հետևյալն են.

1. Հստակեցվել է գույքի և գույքային հարաբերությունների սահմանումը սոցիալ-տնտեսական մեկնաբանման շրջանակներում, որը թույլ է տալիս

բացահայտել գույքային հարաբերությունների բովանդակության ժամանակակից ընկալումը:

2. Առաջարկվում է սինթեզված մոտեցում գոյություն ունեցող մեթոդաբանական մոտեցումների՝ պատմական մատերիալիզմի, մեթոդաբանական կոլեկտիվիզմի և մեթոդաբանական ինդիվիդուալիզմի շրջանակներում: Սինթեզի սկզբունքը արտահայտվում է մարքսյան տեսության, ինստիտուցիոնալիզմի և նեոինստիտուցիոնալիզմի դրույթների համադրությամբ:
3. Բացահայտվել և հիմնավորվել է գույքային հարաբերությունների սուբյեկտների շահերի հավասարակշռությունն ապահովող գործիքակազմը դրանց զարգացման գործընթացում: Այն հարկային համակարգի միջոցով իրականացվող պետական կարգավորման միջոցառումների համալիր է, որը ֆիսկալ և վերաբաշխիչ գործառույթների միջոցով հնարավորություն է տալիս պետությանը նվազեցնել գույքային հարաբերությունների զարգացման բացասական կողմերի ազդեցությունը: Որպես գույքային հարաբերությունների իրացման գործընթացի գնահատման ցուցանիշներ, առաջարկվում են սոցիալ-տնտեսական ցուցանիշներ, որոնք թույլ են տալիս բնութագրելու գույքային հարաբերությունների սուբյեկտների շահերի բավարարման աստիճանը տարբեր մակարդակներում՝ անձնական-մասնավորից մինչև պետական (ՀՆԱ դինամիկա, աշխատավարձի մասնաբաժինը ՀՆԱ-ում, ՄԶՀ):
4. Ներկայացվել է գույքային հարաբերությունների ժողովրդավարացման սահմանումը: Գույքային հարաբերությունների ժողովրդավարացումը տնտեսվարող սուբյեկտների հնարավորությունն է մասնակցելու գույքային հարաբերություններին՝ գույքային հարաբերությունների իրացման արդյունքների յուրացման ձևով, անկախ այն բանից, թե իրավաբանորեն ում է պատկանում տվյալ գույքը, այսինքն, հանրության մեծ մասի ներգրավումը գույքային հարաբերությունների իրացման արդյունքների յուրացման գործընթացին:
5. Բացահայտվել են գույքային հարաբերությունների մի շարք օբյեկտների՝ մտավոր և վիրտուալ (ածանցյալ ֆինանսական գործիքներ) սեփականության իրացման առանձնահատկությունները:
6. Աշխատանքում առանձնացված են գույքային հարաբերությունների զարգացման որակական վիճակները, որոնք ապահովում են անցումը գույքային հարաբերությունների զարգացման հաջորդ մակարդակին:

7. Բացահայտվել են գույքային հարաբերությունների իրացման գործընթացի վրա ազդող պայմանները, որոնք ապահովում են գույքային հարաբերությունների իրացման գործընթացի շարունակականությունը, և դրանով պայմանավորված առանձնացվել են գույքային հարաբերությունների պետական կարգավորման ուղղությունները:
8. Բացահայտվել են գույքային հարաբերությունների զարգացման գործոնները՝ մարդկային կապիտալի, կրթական համակարգի, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը, դրանց փոխկապվածությունը և պետական կարգավորման համակարգի հետ փոխկապակցումը:

Հետազոտության մեթոդաբանական, տեսական և տեղեկատվական հիմքերը: Հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմքը կազմում են դասական, նորդասական, ինստիտուցիոնալ և նեոինստիտուցիոնալ տնտեսագիտական տեսությունների ներկայացուցիչների աշխատանքները: Ատենախոսության տեղեկատվական բազան կազմում են ՀՀ վիճակագրական կոմիտեի, միջազգային կազմակերպությունների կողմից հրապարակված վիճակագրական տվյալները, ինչպես նաև Ինտերնետ տեղեկատվական ցանցի նյութերը:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ ատենախոսությունը խորացնում է գոյություն ունեցող ուսումնասիրությունները գույքային հարաբերությունների զարգացման ոլորտում: Ատենախոսությունում ձևակերպված տեսական դրույթներն ու եզրակացություններն ուղղված են գույքային հարաբերությունների պետական կարգավորման գործընթացի բարելավմանը: Հեղինակի առաջարկությունները կարող են օգտագործվել հետագա հետազոտությունների համար, որոնք վերաբերում են գույքային հարաբերությունների իրացման և զարգացման, ինչպես նաև կարգավորման հիմնախնդիրներին:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսության կառուցվածքը բխում է հետազոտության նպատակից, խնդիրներից, վերլուծության մեթոդաբանությունից և մոտեցումներից: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության ծավալը կազմում է 165 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը, խնդիրները, առարկան և օբյեկտը,

հետազոտության տեղեկատվական և մեթոդական հիմքերը, ձևակերպվել է ատենախոսության գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ **«Գույքային հարաբերությունների էությունը շուկայական տնտեսության համակարգում»** գլխում ուսումնասիրվել են գույքի և գույքային հարաբերությունների տնտեսագիտական բովանդակությունը, ինչպես նաև ներկայացվել գույքի տեսակների բազմակողմ դասակարգումը:

Տնտեսական համակարգի գոյության հիմքում ընկած են գույքային հարաբերությունների գործառնության մեխանիզմները: Գույքային հարաբերությունների վերլուծության շնորհիվ կարելի է հանգամանորեն բացահայտել տնտեսական համակարգի էվոլյուցիայի գործընթացը, ինչպես նաև հետևել սեփականության ինստիտուտների արդիականացման գործընթացին:

Գույքային հարաբերությունների հետազոտության հիմնական հասկացությունը «գույքն» է: Գույքը նյութական օբյեկտներն ու ոչ նյութական բարիքներն են, որոնք օժտված են օգտակարությամբ և արժեքով: Գույքային օբյեկտը կամ գույքը կարող է ներկայանալ իրի (օբյեկտ, որն ունի իրային, նյութական ձև) և/կամ գույքային իրավունքի տեսքով: Իրավունքները գույքային օբյեկտի ֆիզիկական հատկությունների հետ միասին որոշում են օբյեկտի օգտակարությունը: Գույքային հարաբերությունների տակ հասկանում ենք մարդկանց միջև հարաբերությունները գույքային օբյեկտների առնչությամբ: Գույքային հարաբերությունների կազմում մտնում են բազմաբնույթ հարաբերություններ՝ կապված գույքային օբյեկտների կառավարման, օտարման, հաշվառման, գրանցման, գնահատման, օգտագործման, կառավարման և պահպանման վերահսկման հետ և այլն, որտեղ իրացվում են տնտեսվարող սուբյեկտների շահերը:

Ժամանակակից պայմաններում գույքը և գույքային հարաբերությունները սկսել են ավելի շատ ձևափոխվել՝ ձեռք բերելով անշոշափելի ձևեր, դրանով իսկ փոխելով իրենց ներքին բովանդակությունը: Տնտեսական հարաբերություններում այսօր առավել խնդրահարույց են այնպիսի գույքային օբյեկտների վերաբերյալ հարցերը, ինչպիսիք են մտավոր սեփականությունն ու ածանցյալ ֆինանսական գործիքները: Մտավոր սեփականությունը ներառում է յուրացման առանձնահատուկ հարաբերություններ, որոնք պայմանավորված են գիտելիքի հատկություններով, նախևառաջ, տիրապետման և իմացության հարաբերությունների նույնականացմամբ: Բարենպաստ պայմանների ձևավորման դեպքում մտավոր սեփականության իրացման ընթացքում անշեղորեն աճում է յուրացման գործընթացին մասնակցող սուբյեկտների թիվը:

Ածանցյալ ֆինանսական գործիքները գույքային հարաբերությունների իրացման որակական վիճակ են, որոնք աստիճանաբար դուրս են գալիս իրական տնտեսական հարաբերությունների սահմաններից: Արդյունքում, տարբեր երկրների տնտեսություններում ֆինանսական կապիտալի կառուցվածքում գույքային հարաբերությունների օբյեկտի այս տեսակի գերակայությունը անխուսափելիորեն հանգեցնում է ֆինանսատնտեսական ճգնաժամի՝ կապված պարտքերի աճի, որոնք ապահովված չեն ոչ միայն իրական տնտեսական դրությամբ, այլև ներուժով, ինչպես նաև ներկայումս դրանց կարգավորման պատշաճ գործիքների բացակայության հետ:

Ատենախոսության երկրորդ՝ **«Գույքային հարաբերությունների առանձնահատկությունները ժամանակակից պայմաններում»** գլխում ուսումնասիրվել են գույքային հարաբերությունների իրացման չափումը և կարգավորումը, ինչպես նաև գույքային հարաբերությունների զարգացման միտումները ժամանակակից պայմաններում:

Գույքային հարաբերությունների իրացումը միջսուբյեկտային հարաբերությունների վրա հիմնված գործունեության իրականացման գործընթաց է, որն ուղղված է գույքային հարաբերությունների օբյեկտի օգտակար հատկանիշները քաղելուն: Արդյունքը, որպես կանոն, արտահայտվում է նյութական ձևով և իրենից ներկայացնում է գույքային հարաբերությունների սուբյեկտի սպասումներին համապատասխան օգտակարության չափը: Եթե դրանց իրացման արդյունքը գոհացուցիչ չէ, ապա դա բացասաբար է ազդում գույքային հարաբերությունների ամբողջ համակարգի վրա՝ իրացման գործընթացը կամ դանդաղում է, կամ բերում է գույքային հարաբերությունների օբյեկտների էժանացման կամ կապիտալային արժեքի կորստի:

Գույքային հարաբերությունների իրացման աստիճանը բնութագրելու համար առաջարկվել են ցուցանիշներ, որոնք թույլ կտան գնահատել մասնակիցների բավարարման աստիճանը, որտեղ ազգային տնտեսության շրջանակներում հանդես են գալիս երկու կողմեր՝ պետությունը և մարդը: Առաջին դեպքում սոցիալ-տնտեսական իրավիճակի՝ որպես գույքային հարաբերությունների իրացման արդյունքի գնահատումը իր արտահայտությունն է ստանում ՀՆԱ-ի դինամիկայում: Երկրորդ դեպքում մարդու՝ որպես որոշակի մարդկային կապիտալ, նյութական ռեսուրսներ տիրապետող անհատի իրացումը գույքային հարաբերությունների համակարգում արտահայտվում է նրա բարեկեցությամբ, կյանքի որակով և մակարդակով՝ մարդկային զարգացման համաթվի միջոցով: Տվյալ ցուցանիշները վկայում են գույքային հարաբերությունների իրացման մասին, որը բերում է գործընթացի շարունակական նորացման՝ որպես բոլոր

մասնակիցների կայուն մոտիվացիայի արդյունքի, իսկ տնտեսական գործունեության արդյունքների արժեքային հավելաճը զույքային հարաբերությունների զարգացման արդյունքում զույքային հարաբերությունների օբյեկտների կապիտալային արժեքի աճի էությունն է: Նշված ցուցանիշները դիտարկելով մի շարք երկրների օրինակով կարելի է հաստատել, որ զարգացած շուկայական տնտեսությամբ երկրներում տնտեսական գործունեության արդյունքների արժեքային հավելաճը համեմատաբար կայուն է, և ըստ ՄԶՀ-ի երկրի ավելի բարձր վարկանիշի դեպքում բարձր է նաև ըստ ՀՆԱ-ի վարկանիշը: Սա նշանակում է, որ տվյալ երկրում տնտեսական բարգավաճմանը զուգընթաց ընդլայնվում են մարդկային զարգացման հնարավորությունները:

Մարդկային զարգացման ինդեքսի հետ միասին դիտարկվել են նաև մի շարք երկրներում հարկային եկամուտների և աշխատանքի վարձատրության տեսակարար կշիռը ՀՆԱ-ում՝ որպես զույքային հարաբերությունների իրացման արդյունք և դրանց զարգացման նախադրյալ: Մարդկանց եկամուտներում կարևոր տեղ է հատկացվում աշխատավարձին: Այն ապահովում է մարդկանց հիմնական պահանջմունքները, այդ թվում նրանց ներուժի զարգացման առումով:

Աղյուսակ 1. Աշխատանքի վարձատրության և հարկային եկամուտների բաժինները ՀՆԱ-ում (%) և ՄԶՀ-ն, 2018թ.[1]

Երկիրը	Աշխատանքի վարձատրության բաժինը ՀՆԱ-ում	Հարկային եկամուտների բաժինը ՀՆԱ-ում	Երկրների վարկանիշն ըստ ՄԶՀ-ի
1.Նորվեգիա	49,7	38,2	1.0,953
2.Շվեյցարիա	65,7	28,5	2.0,944
3.Ավստրալիա	48,4	28,2	3.0,939
4.Իռլանդիա	33,7	22,8	4.0,938
5.Գերմանիա	56,8	37,5	5.0,936
6.Իսլանդիա	63,7	37,7	6.0,935
7. Հոնկոնգ (Չինաստան)	58,0	14,0	7.0,933
7.Շվեդիա	48,9	44,0	7.0,933

[1] Աղյուսակը կազմվել է օգտագործելով Աշխատանքի միջազգային կազմակերպության, Եվրամիության վիճակագրական ծառայության և «Տնտեսական ազատության ինդեքս 2019»-ի տվյալները: Աշխատանքի միջազգային կազմակերպություն, ILO database of labour statistics, www.ilo.org/ilostat, Եվրոստատ http://ec.europa.eu/eurostat/statistics-explained/index.php/Tax_revenue_statistics, «Տնտեսական ազատության ինդեքս 2019» Heritage Foundation https://www.heritage.org/index/

9.Սինգապուր	60,4	13,7	9 . 0,932
10.Նիդերլանդներ	57,2	38,8	10 . 0,931
11.Դանիա	56,1	46,0	11 . 0,929
12. Կանադա	54,9	32,2	12 . 0,926
13.ԱՄՆ	56,1	27,1	13 . 0,924
14.Միացյալ Թագավորության	58,4	33,3	14 . 0,922
15.Ճապոնիա	57,4	30,7	19 . 0,909
16.Լյուքսեմբուրգ	54,1	38,7	21 . 0,904
17.Իսրայել	44,1	32,7	22 . 0,903
18.Ֆրանսիա	58,3	46,2	24 . 0,901
19.Իտալիա	52,5	42,4	28 . 0,880
20.Էստոնիա	53,7	33,0	30 . 0,871
21.Հունաստան	49,4	39,4	31 . 0,870
22.ԱՄԷ	34,7	8,9	34 . 0,863
23.Քաթար	18,8	5,7	37 . 0,856
24.Ռուսաստանի դաշնություն	48,1	22,2	49 . 0,816
25. Բուլղարիա	60,2	28,0	51 . 0,813
26.Բելառուս	47,4	23,8	53 . 0,808
27.Ղազախստան	35,1	12,8	58 . 0,800
28.Թուրքիա	48,3	24,9	64 . 0,791
29. Վրաստան	29,6	25,8	70 . 0,780
30. Մեքսիկա	34,7	16,2	74 . 0,774
31. Հայաստան	34,8[2]	21,3	83 . 0,755
32. Ուկրաինա	38,9	33,1	88 . 0,751

Աղյուսակ 1-ի շարունակություն

Այն երկրներում, որտեղ կենսամակարդակը ավանդաբար բարձր է, բարձր է նաև հարկային եկամուտների բաժինը ՀՆԱ-ում: Առաջին հայացքից կարող է թվալ, որ այդ երկրներում սեփականատերերի և տնտեսվարողների սահմանափակումներն ավելի մեծ են, իսկ գույքային հարաբերությունների

[2] Ըստ 2018թ. Հայաստանի վիճակագրական տարեգրքի տվյալների 2016թ. եկամուտների ձևավորման հաշվի վարձու աշխատողների աշխատանքի վարձատրության և ՀՆԱ հարաբերության ցուցանիշը կազմել է 34,8%:

իրացման ինտենսիվությունը, որը նախադրյալներ է ստեղծում հասարակության զարգացման համար, այնքան էլ բարձր չէ: Սակայն, ՄԶՀ տվյալները վկայում են, որ անձի շահերը պաշտպանված են պատշաճ կերպով, իսկ զարգացման հնարավորությունները ավելի քան բարենպաստ են: Այլ խոսքերով, պետության կողմից գանձվող գումարը՝ որպես գույքային հարաբերությունների իրացման համարժեք արդյունք, գույքային նոր հարաբերությունների հետագա իրացման նախադրյալներ է ստեղծում և ապահովում դրա շարունակականությունը գույքային հարաբերությունների զարգացման շրջանակներում: Հարկային համակարգը, կամ ավելի ճիշտ դրա որակական կառուցվածքը, գույքային հարաբերությունների զարգացման տեսանկյունից առաջին հերթին կատարում է կարգավորիչ դեր, որն ընդլայնում է մարդու զարգացման հնարավորությունները:

Գույքային հարաբերությունների զարգացման գործընթացը, որն արտահայտվում է այդ հարաբերությունների բազմասուբյեկտությամբ, պայմանավորում է իրացման նոր ձևերի առաջացում: Ներկայումս գույքային հարաբերությունների առավել արդիական ձևերն են ժողովրդավարացումը և ապաանձնավորումը:

Առավել ընդհանուր ձևով գույքային հարաբերությունների ժողովրդավարացումը կարելի է սահմանել որպես տնտեսվարող սուբյեկտների հնարավորություն մասնակցելու գույքային հարաբերություններին՝ դրանց իրացման արդյունքների յուրացման ձևով, անկախ այն բանից, թե իրավաբանորեն ում է պատկանում տվյալ գույքը, այսինքն, հանրության մեծ մասի ներգրավումը գույքային հարաբերությունների իրացման արդյունքների յուրացման գործընթացին: Այս տեսանկյունից, երկրի ՀՆԱ-ում պետական ծախսերի տեսակարար կշիռը կարող է ընկալվել որպես ժողովրդավարացման չափանիշ: Ինչպես հետևում է կատարված վերլուծությունից, բոլոր երկրներում, որոնք բնութագրվում են որպես առավել բարձր կենսամակարդակ ունեցող երկրներ, ավելի քան հարյուրամյա ժամանակաշրջանում պետական ծախսերի տեսակարար կշիռը կայուն աճել է: Սա նաև նշանակում է, որ կայուն տնտեսական զարգացման պայմաններում գույքային հարաբերությունների ժողովրդավարացումը պայմանավորում է տվյալ տնտեսությունում կենսամակարդակի աճ: Զարգացող և անցումային տնտեսությամբ երկրները օբյեկտիվ հանգամանքների բերումով (տնտեսության հիմնական ճյուղերում արտադրության անկում և անկայունություն) նման ներուժով օժտված չեն: Հետևաբար, գույքային հարաբերությունների ժողովրդավարացման համար պայմանները բարենպաստ չեն, ինչով էլ պայմանավորված է բնակչության ցածր կենսամակարդակը:

Գույքային հարաբերությունների ապաանձնավորումը գույքային հարաբերությունների մասնատումն է մի քանի տնտեսվարող սուբյեկտների միջև, լրացուցիչ ոչ սեփականատեր մասնակիցների ներգրավումը գույքային հարաբերությունների իրացման գործընթացին: Աշխատանքում քննարկվել են գույքային հարաբերությունների ապաանձնավորման ժամանակակից ձևերը, որոնց թվում են աութսորսինգը, թոլինգը, ֆրանչայզինգը, լիզինգը, ռազմավարական դաշինքները, պետական-մասնավոր գործընկերությունը և այլն:

Ատենախոսության երրորդ՝ **«Գույքային հարաբերությունների պետական կարգավորումը ՀՀ-ում»** գլխում ուսումնասիրվել են գույքային հարաբերությունների զարգացման առանձնահատկությունները ՀՀ-ում, բացահայտվել են գույքային հարաբերությունների կարգավորման ուղղությունները, գույքային հարաբերությունների զարգացման գործոնները և ներկայացվել է նոր որակի գույքային հարաբերությունների պետական կարգավորման քաղաքականությունը ՀՀ տնտեսությունում:

Գույքային հարաբերությունների իրացման գործընթացի վրա զգալիորեն ազդում է ինստիտուցիոնալ միջավայրը՝ որպես հիմնական քաղաքական, իրավական և սոցիալ-տնտեսական կանոնների ամբողջություն: Գույքային հարաբերությունների զարգացման պայմանները որոշվում են իրավական, սոցիալական և տնտեսական հարաբերությունների հստակեցման աստիճանով, ինչով էլ պայմանավորված կարելի է առանձնացնել գույքային հարաբերությունների կարգավորման ուղղությունները ՀՀ-ում:

Հայաստանում տեղի ունեցած սեփականաշնորհումը կանխորոշեց գույքային հարաբերությունների ժողովրդավարացման դրսևորման ժամկետները և ձևերը: Ինչպես արդյունաբերության, առևտրի և ծառայությունների ոլորտի, այնպես էլ հողի սեփականաշնորհման արդյունքում ձևավորվեցին ոչ բարենպաստ սոցիալ-տնտեսական պայմաններ ՀՀ անցումային տնտեսությունում արտադրության զարգացման համար: Կապված շուկայական տնտեսության ձևավորման և դրա հիմքի՝ մասնավոր սեփականության ինստիտուտի կայացման հետ, ամրագրումներ կատարվեցին նախևառաջ օրենսդրական իրավական ակտերում:

Գույքային հարաբերությունների ինստիտուտի ձևավորումը, իհարկե, կրում է էվոլյուցիոն բնույթ: Սակայն, դրա տեմպը և դինամիկան կարող են ենթարկվել որոշակի կարգավորման: Պետությունը կարևոր դեր է խաղում այս հարցում՝ կամ ստեղծում է խթաններ, կամ համապատասխան կարգավորիչ մեթոդների բացակայության պատճառով դանդաղեցնում է գույքային հարաբերությունների զարգացման գործընթացը: Օրինակ, պետության մասնակցությունը գույքային հարաբերությունների ժողովրդավարացման գործընթացին, ինչպես վկայում է

զարգացած շուկայական հարաբերություններ ունեցող երկրների փորձը, նպաստում է դրա զարգացմանը:

Աշխատանքում դիտարկվել է ՀՀ բնակչության գույքային իրավունքների իրացման գործընթացը նրանց խնայողությունների տեսքով՝ տնային տնտեսության մեկ շնչի հաշվով դրամական եկամուտների և բնակչության բանկային ավանդների տեսքով պահվող խնայողությունների միջև եղած կապը 2009-2017 թվականներին:

Աղյուսակ 2. Տնային տնտեսության մեկ շնչի հաշվով դրամական անվանական եկամուտների[3] և բնակչության բանկային ավանդների[4] դինամիկան

	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	ԿԳ
Տնային տնտեսության մեկ շնչի հաշվով, միջին ամսական եկամուտ, դրամ	28038	31553	34206	39056	42404	49535	52377	56544	58474	0,97
Բնակչության բանկային ավանդները, դեկտեմբերի վերջի դրությամբ, մլրդ դրամ	291	356	483	790	638	894	1005	1155	1351	

[3] Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, ՀՀ ՎԿ, 2018 Մաս 2. Հայաստան. տնային տնտեսությունների եկամուտները, ծախսերը և հիմնական սննդամթերքի սպառումը, էջ 123, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, ՀՀ ԱՎԾ, 2016 Մաս 2., էջ 114, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, ՀՀ ԱՎԾ, 2014 Մաս 2., էջ 104, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, ՀՀ ԱՎԾ, 2012 Մաս 2., էջ 122

[4] ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2008-2017թթ. հունվար-դեկտեմբերին, ՀՀ ՎԿ, Դրամավարկային հիմնական ցուցանիշներ https://www.armstat.am

Ինչպես կարելի է տեսնել աղյուսակ 2-ից, 2009-2017թթ. ընթացքում մեկ շնչի հաշվով եկամուտն ավելացել է 2,1 անգամ, իսկ ավանդների ծավալը՝ 4,6 անգամ: Ընդ որում կորելյացիոն գործակիցը (ԿԳ) կազմում է 0.97: Այս փաստերը ցույց են տալիս, որ բնակչությունը ոչ միայն պատրաստ է, այլև ակտիվորեն օգտագործում է ինչպես խնայելու, այնպես էլ իր ֆինանսական միջոցների ավելացման հնարավորությունը:

Կատարված ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ բնակչության մոտ ձևավորել է անհատականության որոշակի աստիճան, ռիսկեր և պատասխանատվություն ընդունելու ունակություն: Միևնույն ժամանակ, շարունակում են արդիական մնալ մարդկային կապիտալի տնտեսական իրացման սահմանափակումը և տնտեսությունում համեմատաբար ցածր արտադրողականությունը: Ֆինանսական հաստատությունների որակը կանխորոշում է բնակչության ֆինանսական միջոցների աճի լայն հնարավորությունների բացակայությունը: Արժեթղթերի շուկայում նկատվում է ֆինանսական գործիքների ծավալի և բազմազանության պակաս, ինչը, մի կողմից, նեղացնում է արժեթղթերի շուկան, սահմանափակելով դրա որպես ներդրումների գեներատորի հնարավորությունը Հայաստանի տնտեսությունում, մյուս կողմից, հանգեցնում է նրան, որ դրամական միջոցները ներդրվում են փոքր թվով թողարկողների ֆինանսական գործիքների նեղ շրջանակում:

Մարդկանց գիտելիքների, հմտությունների, պահանջմունքների և ունակությունների փոփոխությունները պայմանավորում են գույքային հարաբերությունների ներքին բովանդակության, մասնավորապես՝ դրանց սուբյեկտային բնութագրի փոփոխությունը: Կրթական գործընթացի միջոցով այս հարաբերությունների մասնակիցների հնարավորությունների ընդլայնման դեպքում, ընդլայնվում են տնտեսության զարգացման հնարավորությունները: Կրթական համակարգի ճկունությունը՝ տնտեսական գործունեության փոփոխություններին արագ արձագանքելու կարողությունը որոշում է աշխատողների մասնագիտական մակարդակի ներդաշնակ դինամիկան և տնտեսական զարգացումը:

Մարդկային կապիտալի որպես գույքային հարաբերությունների զարգացման գործոնի ձևավորմանը և որակավորման պահանջների ոլորտում փոփոխություններին զուգընթաց, փոփոխություններ են տեղի ունենում նաև գիտելիքի ձևավորման տեղեկատվական աղբյուրների և դրանց տարածման տեխնոլոգիաների ոլորտում: Թվային տնտեսությունն այժմ ներթափանցում է տնտեսության բազմաթիվ ոլորտներ, ազդելով այնպիսի ճյուղերի վրա ինչպիսիք են բանկային ոլորտը, մանրածախ առևտուրը, էներգետիկան, տրանսպորտը,

կրթությունը, հրատարակչությունը, լրատվամիջոցները և առողջապահությունը: Պետությունը պետք է մշակի թվային տնտեսության զարգացման ռազմավարություն՝ ընդլայնելով դրա առավելությունները և պատասխանելով այնպիսի մարտահրավերների, ինչպիսիք են գործազրկության կրճատումը և աղքատության դեմ պայքարը:

ՏՀՏ ենթակառուցվածքը և Ինտերնետի տարածումը մեծ ազդեցություն ունեն գույքային հարաբերությունների զարգացման վրա, ինչը բերում է մարդկանց ավելի մեծ խմբի գույքային հարաբերություններում մասնակցության հնարավորության ընդլայնմանը: Գույքային հարաբերությունների զարգացման գործոնների փոխազդեցության ընդհանրացված սխեման ներկայացված է գծապատկեր 1-ում:



Գծապատկեր 1. Գույքային հարաբերությունների զարգացման գործոնները

Այսպիսով, հաշվի առնելով, որ մարդկային կապիտալն է նյութական կապիտալի ստեղծողը, նա պահպանում և փոխանցում է սպառվող ֆիզիկական կապիտալի արժեքը ապրանքներին, ստեղծում է նոր արժեք, որը փոխհատուցում է արտադրության, այդ թվում, աշխատանքային ծախքերը և շահույթ է բերում ձեռնարկատիրոջը, կարելի է եզրակացնել, որ գույքային հարաբերությունների զարգացումը, առաջին հերթին, տեղի է ունենում մարդկային ներուժի զարգացման շնորհիվ, ինչը հետևողականորեն նախադրյալներ է ստեղծում նյութական կապիտալի ավելացման, և համապատասխանաբար, տնտեսության

մեջ գույքային հարաբերությունների իրացման համար: Մարդկային կապիտալը հանդիսանում է գույքային հարաբերությունների զարգացման գործոն՝ ձեռք բերելով առաջնային նշանակություն և իրացվելով աշխատանքային գործընթացում, որտեղ պետության դերը կայանում է մարդկային կապիտալի վերարտադրության և գույքային իրավունքների պաշտպանության համար արդյունավետ ինստիտուցիոնալ պայմանների ստեղծման գործառույթներում: Պետությունը ստեղծելով բարենպաստ և կանխատեսելի պայմաններ գույքային հարաբերությունների զարգացման համար, մարդկային կապիտալի զարգացման և գույքային հարաբերությունների վերարտադրության նոր շրջան է բացում:

Ատենախոսության **«Եզրակացություններ»** բաժնում ընդհանրացվել և ամփոփվել են հետազոտության հիմնական արդյունքները, որոնք ներկայացված են հետևյալ դրույթներում.

1. Գույքային հարաբերություններն, ինչպես շուկայական տնտեսությունը կազմող ցանկացած այլ հասարակական ինստիտուտ, կազմում են հասարակության հիմնական կառուցվածքներից մեկը: Դրանք անմիջականորեն մտնում են հասարակության տնտեսական համակարգի մեջ և կարող են ձևակերպվել կամ չձևակերպվել սեփականության հարաբերություններով:
2. Անհրաժեշտ է ընդունել գույքի տնտեսական գործառույթի առաջնահերթությունը: Գույքը որպես տնտեսագիտական կատեգորիա հավերժական է, այսինքն, նույնիսկ իրավունքի՝ որպես հասարակական գործընթացների կարգավորողի անհետացման դեպքում, գույքային հարաբերությունները՝ որպես մարդկային գոյության նյութական հիմք, միշտ գոյություն կունենան:
3. Տնտեսական գործընթացների բարդացումը պայմանավորում է սկզբունքորեն նոր գույքային հարաբերությունների ձևավորման անհրաժեշտություն, ինչը հանգեցնում է գույքային հարաբերությունների իրացման ընթացքում այնպիսի գործընթացի առաջացմանը, ինչպիսին ապաանձնավորումն է: Այն, իր հերթին, նախադրյալներ է ստեղծում թե՛ գույքի նոր օբյեկտների, և թե՛ գույքային հարաբերությունների նոր ձևերի առաջացման համար:
4. Ի տարբերություն նյութական սեփականության, մտավոր սեփականությանը բնորոշ են յուրացման հատուկ հարաբերություններ, որոնք պայմանավորված են գիտելիքի հատկություններով (չսպառվող, չոչնչացվող և այլն), տիրապետման և իմացության հարաբերությունների նույնականացմամբ (միաժամանակ մի շարք անձանց կողմից գիտելիքի

յուրացման և օգտագործման հնարավորությունը սեփականատիրոջ հետ միասին կամ նրանից անկախ և այլն)։ Մտավոր սեփականության համար հատուկ նշանակություն ունեն իրավունքների հավաքածուի այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են բացառիկությունը, օտարելիությունը, մասնատվելու և ընդլայնվելու հատկությունները։ Անհրաժեշտ է նշել նաև հետևյալ միտումը՝ բարենպաստ պայմանների ձևավորման դեպքում (դե յուրե կամ դե ֆակտո), մտավոր սեփականության վերարտադրության ընթացքում յուրացման մասնակիցների թիվն անընդհատ աճում է։ Այս տեսանկյունից զգալիորեն աճում է գույքային հարաբերությունների բազմասուբյեկտությունը, որը կապված է օբյեկտի վերարտադրության առանձնահատկությունների հետ (էժանություն և պարզություն)։ Նյութական և ոչ նյութական օբյեկտների գույքային հարաբերությունների իրացումը սկզբունքորեն տարբեր է։

5. Ֆինանսական տնտեսությունում տեղի է ունենում ֆինանսական կապիտալի օտարում իրական հատվածից, նրանցից, ովքեր արտադրել են այն, կորցնելով ինչպես արտադրության գործընթացի վերահսկողությունը, այնպես էլ դրա արդյունքը յուրացնելու գործնական հնարավորությունը։ Ֆինանսական կապիտալը անցնում է միջնորդների ձեռքը, ովքեր իրենց գործունեության շրջանակներում չեն իրականացնում ֆինանսական ակտիվի սկզբնական արժեքի ավելացման գործընթաց, այլ միայն գրանցում են դրա փոփոխությունները՝ կախված ֆինանսական շուկայում ստեղծված իրավիճակից։ Այսպիսով, տեղի է ունենում կապիտալի վիրտուալացում։ Այստեղ արժեքի բարձրացման գործոններ են ժամանակը, տեղեկատվության որակը, քաղաքական կոնյունկտուրան, որոշումների ընդունման արագությունը։ Ածանցյալ ֆինանսական գործիքների տեսքով գույքային հարաբերությունների իրացման դեպքում փոխանակության ընթացում դրանց արժեքը և օգտակարությունը ենթադրվում են ապագա ժամանակաշրջաններում, այսինքն, գործունեությունում, որը միայն ենթադրաբար կարող է տեղի ունենալ որպես այդպիսին և միայն ենթադրաբար է ապագա ժամանակաշրջանի ռեսուրս։ Ածանցյալ ֆինանսական գործիքների տեսքով գույքային հարաբերությունների զարգացումն ունի ոչ կանոնավոր բնույթ՝ պայմանավորված ներկայումս դրանց համապատասխան կարգավորման գործիքների բացակայությամբ։

6. Գույքային հարաբերությունների իրացումը դրանց զարգացման ընթացքում ձեռք է բերում նոր որակական հատկանիշներ: Գույքային հարաբերությունների զարգացումը հիմնվում է գույքային հարաբերությունների իրացման շարունակականության սկզբունքի վրա, որտեղ միջսուբյեկտային հարաբերությունների գերակայությունը բերում է դրանց որակական հատկանիշների փոփոխությանը և գույքային օբյեկտների ծավալի կամ քանակի ավելացմանը: Ընդ որում, մակրոմակարդակում գույքային հարաբերությունների իրացման ցուցանիշներ են ՀՆԱ-ի դինամիկան, համախմբված բյուջեի եկամուտները և ծախսերը, որոնք որոշվում են գույքային հարաբերությունների ժողովրդավարացմամբ, իսկ միկրոմակարդակում՝ կապիտալի, բիզնեսի եկամտաբերության աճը, որը որոշվում է գույքային հարաբերությունների ապաանձնավորմամբ: Գույքային հարաբերությունների զարգացումը պայմանավորում է նոր միջսուբյեկտային հարաբերությունների ծագումը, ընդլայնելով դրանց հնարավորությունները իրավասությունների ավելի ու ավելի բազմազան փնջերի համակցության միջոցով:
7. Բացի տնտեսական գործունեությունը կանոնակարգող և գույքային հարաբերությունների իրացման պայման հանդիսացող պարտադիր օրենսդրական դաշտից, գույքային հարաբերությունների ներդաշնակ զարգացման համար անհրաժեշտ է դրանց կարգավորման գործիքակազմ, որը կարող է ապահովել տնտեսվարողների ու հասարակության շահերի հավասարակշռության կայունությունը: Որպես գույքային հարաբերությունների կարգավորման գործիք հանդես է գալիս հարկային համակարգը՝ իրեն բնորոշ գործառույթների ամբողջությամբ: Ընդ որում, կարևոր նշանակություն է ստանում հարկային մեխանիզմների միջոցով ֆիզիկական և իրավաբանական անձանցից օտարված դրամական ռեսուրսների ծավալների համարժեքությունը հասարակության և անձի կողմից յուրացված ծավալին, որն արտահայտվում է համապատասխան կյանքի մակարդակով և որակով: Հարկային համակարգի վերաբաշխման մեխանիզմի թուլացման հետևանքով կարող է աճել անհավասարությունը: Եկամուտների անհավասարությունը զսպող միջոցառումների շարքում կարևորվում է պրոգրեսիվ հարկային համակարգի զարգացումը, ինչն ապահովում է հարկային բեռի

տեղափոխումը հասարակության նվազ ապահով խմբերից առավել ապահով խմբերը:

8. Գույքային հարաբերությունների ապաանձնավորումը, որը բնութագրվում է սուբյեկտների փոխլրացնող հարաբերություններով, բերում է սիներգետիկ (համագործակցային փոխազդեցության) էֆեկտի, որը շատ ավելի մեծ է, քան իրացման գործընթացի մասնակիցների ինքնավար տնտեսական էֆեկտների գումարը, և աշխատանքի բաժանման ու մասնագիտացման խորացման, ինչը նպաստում է աշխատանքի արտադրողականության և տնտեսական աճին:

9. Գույքային հարաբերությունների ապաանձնավորումը իրավասությունների մի մասը՝ իրավունքների փունջը այլ անձի փոխանցման ձև է: Դրա հիմքում ընկած է միջսուբյեկտային գույքային հարաբերությունների իրացման նոր ձևերի որոնման օբյեկտիվ անհրաժեշտությունը՝ նախորդ ձևերի, մասնավորապես, անձնավորման արդիականության կորստի պատճառով: Ծագում են գույքային հարաբերությունների իրացման նոր ձևեր: Դրանք արտահայտվում են գույքային հարաբերությունների իրացման գործընթացում իրավասությունների փնջերի տարբեր ձևափոխությունների միջոցով, ինչն ամրագրվում է տարբեր պայմանագրային համաձայնություններում: Դասական օրինակներ են ֆրանչայզինգը, լիզինգը, աութսորսինգը, կոնցեսիան և այլն:

10. Գույքային հարաբերությունների դինամիկայի բնութագրումը նեոինստիտուցիոնալ տնտեսագիտական տեսության տեսանկյունից մեզ բերում է կարևոր եզրակացության, որ փոփոխությունները գույքային հարաբերությունների զարգացման և գործառնության ընթացքում տեղի են ունենում հիմնականում հետևյալ գործոնների նշանակության բարձրացման ուղղությամբ.

1. Մասնակի յուրացում, այսինքն, ոչ թե իրավասությունների ամբողջ փնջի, այլ դրանց մի մասի յուրացումը փոխգործակցող տնտեսական գործակալների կողմից:

Ժամանակակից պայմաններում այս միտումն ուժգնանում է հետևյալ գործոնների օգտագործման պրակտիկայի ընդլայնմամբ.

ա) գործարար փոխգործակցության ամենատարբեր սխեմաների ու ձևերի, որոնք հիմնվում են աութսորսինգի, ֆրանչայզինգի, լիզինգի և նմանատիպ գործարար փոխհարաբերությունների վրա՝ մի կողմից, խոշոր բիզնեսի և մյուս կողմից, միջին ու փոքր բիզնեսի միջև,

բ) կորպորատիվ կառույցների, ինչպիսիք են գործարարության ռազմավարական դաշինքները,
գ) թրասթային համաձայնագրերի,
դ) պետական-մասնավոր գործընկերության բոլոր ձևերի։

2. Գործընթացի իրականացման ժամանակային կողմը։ Եթե նախկինում ռեսուրսների և դրանց օգտագործման իրավասությունների յուրացումը բաժնետիրական սեփականության ներքո, որպես կանոն, չէր սահմանափակվում ժամանակային պարամետրով, ապա ժամանակակից կորպորատիվ կառույցների համար գործարար փոխգործակցության դեպքում, ինչպես փոքր և միջին բիզնեսի, այնպես էլ միմյանց և պետական կառույցների հետ, ավելի բնորոշ է դառնում ժամանակի սահմանափակումը։

11. Գույքային հարաբերությունների զարգացման գործընթացի հիմնական հարթակը պետական կարգավորման համակարգն է, որը կողմնորոշված է դեպի շուկայական տնտեսությունը։ Գույքային հարաբերությունների կարգավորումը կարելի է իրականացնել հետևյալ ուղղություններով.

1. Գույքային իրավունքների իրավաբանորեն պարզորոշ ամրագրումը և դրանց հատկորոշումը, գույքի շրջանառության համակարգը (օրինակ, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցումը, գնահատումը, գործարքները, համապատասխան ենթակառուցվածքը և այլն), պայմանագրային հարաբերությունների համակարգի խիստ և պարտադիր պահպանումը։

2. Որակյալ սոցիալ-աշխատանքային հարաբերությունների ապահովումը, որոնք մի կողմից, բավարարում են գործատուների պահանջները աշխատանքային ռեսուրսների արդյունավետ օգտագործման տեսանկյունից, իսկ մյուս կողմից, վարձու աշխատողների աշխատանքային պայմանները։

3. Որակյալ ինստիտուցիոնալ պայմանների ապահովումը, որոնք բացի իրավունքների համակարգից արտահայտվում են նաև ոչ ֆորմալ հարաբերությունների միջոցով՝ նպաստելով շուկայական մեխանիզմի, և մասնավորապես, մրցակցության զարգացմանը։

12. Կատարված ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ բնակչության մոտ արդեն ձևավորվել են անհատականության որոշակի աստիճան, ռիսկեր և պատասխանատվություն ընդունելու ունակություններ, որոնք թույլ են տալիս հաղթահարել սոցիալ-տնտեսական բնույթի սահմանափակումները։ Միևնույն ժամանակ,

շարունակում են արդիական մնալ մարդկային կապիտալի տնտեսական իրացման սահմանափակումը և տնտեսությունում համեմատաբար ցածր արտադրողականությունը: Մոտիվացիան զգալիորեն կախված է կենսագործունեության պայմաններից: Ֆինանսական հաստատությունների որակը կանխորոշում է բնակչության ֆինանսական միջոցների աճի լայն հնարավորությունների բացակայությունը՝ նրանց ներդրումներ կատարելու պատրաստակամության դեպքում:

13. Կրթական համակարգի առաձգականության և տեղեկատվական տեխնոլոգիաների տարածվածության գործոնները հարստացնում են մարդկային կապիտալը, որի որակը, իր հերթին, վերափոխվում է տնտեսվարող սուբյեկտների որակավորման և մասնագիտացման աճի՝ ընդլայնելով գույքային հարաբերությունների սուբյեկտների հնարավորությունները: Այս փոխգործակցության արդյունքում առաջանում են նոր որակի գույքային հարաբերություններ, որոնք ոչ միշտ է, որ ունեն կայուն իրավական ուրվագծեր. արագացել է յուրացման-օտարման իրականացման գործընթացը, սակայն դժվարացել է իրավունքների ամրագրումը՝ նոր գույքային օբյեկտների (մտավոր, վիրտուալ գույք) առանձնահատկությունների պատճառով: Սա, իր հերթին, խթան է իրավական հաստատությունների որակի բարձրացման և գույքային իրավունքների հստակեցման համար: Նշված գործոնների փոխկապվածության և ներդաշնակ համադրության դեպքում ստեղծվում են պայմաններ, որոնք նպաստում են նոր ձևավորված գույքային հարաբերությունների տարածմանը:

14. Մարդկային կապիտալի որակի ձևավորումը կրթական համակարգի միջոցով, որը նպաստում և կարողանում է առավելագույն կերպով հարմարվել տնտեսվարողների պահանջներին, խթանում է գույքային հարաբերությունների դինամիկան և հանդիսանում է գույքային հարաբերությունների զարգացման շարժիչ ուժ: Ընդ որում, էական դեր ունեն նաև նորարարությունները, դրանց տեսակարար կշիռը տնտեսությունում: Այս իմաստով, պետության ակտիվ դիրքորոշումը տնտեսության նորարարացման (նորարարական գործունեության աճի համար պայմանների ստեղծումը) և կրթական համակարգի զարգացման հարցերում ունի մեծ ազդեցություն: Գույքային հարաբերությունների զարգացումը, առաջին հերթին, տեղի է ունենում մարդկային ներուժի զարգացման շնորհիվ, ինչը հետևողականորեն նախադրյալներ է

ստեղծում նյութական կապիտալի ավելացման, և համապատասխանաբար, տնտեսության մեջ գույքային հարաբերությունների իրացման համար: Մարդկային կապիտալը հանդիսանում է գույքային հարաբերությունների ընդլայնման գործոն՝ ձեռք բերելով առաջնային նշանակություն և իրացվելով աշխատանքային գործընթացում, որտեղ պետության դերը կայանում է մարդկային կապիտալի վերարտադրության և գույքային իրավունքների պաշտպանության համար արդյունավետ ինստիտուցիոնալ պայմանների ստեղծման գործառույթներում: Պետությունը ստեղծելով բարենպաստ և կանխատեսելի պայմաններ գույքային հարաբերությունների զարգացման համար, ապահովում է տնտեսությունում եկամտի բավարար մակարդակ, որն էլ, իր հերթին, մարդկային կապիտալի և գույքային հարաբերությունների զարգացման նոր հնարավորություններ է ստեղծում:

Ատենախոսության հիմնական արդյունքները հրատարակվել են հեղինակի հետևյալ գիտական հոդվածներում.

1. Գաբրիելյան Վ. Պետական գույքի կառավարումը զարգացած երկրների օրինակով // Ֆինանսներ և էկոնոմիկա, #5-6 (213-214), 2018, էջ 150-154
2. Գաբրիելյան Վ. Գույքային հարաբերությունների իրականացումը որպես դրանց վերարտադրության հիմք // Տնտեսության զարգացման և կառավարման հիմնախնդիրներ: Պարբերական գիտական ժողովածու, Տնտեսագիտության և կառավարման ինստիտուտ: Եր.: «ՕՐ-ԴԱՐ» հրատ., 2017, Գիրք 10, էջ 271-282
3. Գաբրիելյան Վ. ՀՀ անշարժ գույքի շուկան 2016 թվականին // ԱՅԼԸՆՏՐԱՆՔ գիտական հանդես, #2 ապրիլ-հունիս, 2017, էջ 145-152
4. Գաբրիելյան Վ. Պետական և մասնավոր սեփականության արդի հիմնահարցերը // Բանբեր Երևանի համալսարանի, N 3 (21), 2016, էջ 58-73
5. Գաբրիելյան Վ. Պետական-մասնավոր գործընկերության պետության և գործարարության փոխգործակցության նոր միտումները // Ֆինանսներ և էկոնոմիկա, #3-4 (187-188), 2016, էջ 59-62
6. Գաբրիելյան Վ. Հավատարմագրային կառավարման ծառայությունների շուկայի զարգացումը ՀՀ-ում // Բանբեր Երևանի համալսարանի, N 3 (144), 2014, էջ 47-57

Проблемы государственного регулирования имущественных отношений на современном этапе развития экономики РА

Диссертация на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.01-«Общая экономика».

Защита диссертации состоится 17 февраля 2020 года в 13.30 часов на заседании специализированного совета 015 ВАК РА по экономике, действующего в Ереванском государственном университете.

Адрес: Ереван, 0009, ул. Абовяна 52.

РЕЗЮМЕ

Актуальность темы исследования обусловлена развитием общественных отношений, эволюция которых не оставляет характер развития различных сфер человеческой деятельности неизменным. При том, изменения в имущественных отношениях становятся все более выраженными с социальной, политической, правовой и, конечно же, экономической точек зрения. Анализ особенностей и изменений содержания имущественных отношениях отражает экономические проблемы и возможности их решения в отдельных странах, позволяет прогнозировать результаты реформ, а также выявлять потенциал экономического развития стран.

Объектом исследования являются имущественные отношения. Предметом исследования является развитие имущественных отношений в Республике Армения в процессе их реализации и государственного регулирования. Цель исследования - изучить сущность имущественных отношений, закономерности их развития с учетом исторических и социально-экономических траекторий, а также обосновать направления регулирования имущественных отношений в Республике Армения, направленные на ограничение негативной динамики имущественных отношений. Для достижения цели диссертации были определены следующие задачи исследования:

- ✓ изучить понятие «имущество», имущественные отношения, выявить особенности имущественных отношений и определить их место в системе общественных отношений,
- ✓ рассмотреть реализацию имущественных отношений в динамике и предложить показатели характеризующие их развитие,
- ✓ рассмотреть роль налоговой системы как инструмента регулирования развития имущественных отношений в системе экономических функций государства, выявить особенности имущественных отношений, новых форм выражения, соответствующие современным экономическим условиям,

- ✓ предложить направления государственного регулирования развития имущественных отношений в РА,
- ✓ выявить факторы развития имущественных отношений и представить политику государственного регулирования качественно новых имущественных отношений в экономике РА.

Научный результат диссертации основан на научно обоснованном исследовании имущественных отношений, которое развивает представления о содержании, эволюции и динамике имущественных отношений в современных условиях. Основные положения научной новизны в работе заключаются в следующем:

1. Выяснены определения имущества и имущественных отношений в рамках социально-экономической интерпретации.
2. Предлагается синтезированный подход исследования в рамках существующих методологических подходов.
3. Выявлен и обоснован инструмент обеспечения равновесия интересов субъектов имущественных отношений в процессе их развития. Это комплекс мер государственного регулирования, осуществляемых через налоговую систему.
4. Представлено определение демократизации имущественных отношений.
5. Выявлены особенности реализации ряда объектов имущественных отношений -интеллектуальной и виртуальной собственности.
6. Выделены качественные состояния развития имущественных отношений, которые обеспечивают переход к следующему уровню развития имущественных отношений.
7. Выявлены условия, влияющие на процесс реализации имущественных отношений, которые обеспечивают непрерывность процесса реализации имущественных отношений, и тем самым изложены направления государственного регулирования имущественных отношений.
8. Выявлены факторы развития имущественных отношений: развитие человеческого капитала, системы образования, информационных технологий, их взаимосвязь и взаимосвязь с системой государственного регулирования.

Теоретическая и практическая значимость исследования заключается в том, что диссертация углубляет существующие исследования в области развития имущественных отношений. Теоретические положения и выводы, сформулированные в диссертации, направлены на совершенствование процесса государственного регулирования имущественных отношений. Предложения автора могут быть использованы для дальнейших исследований по реализации и развитию имущественных отношений, а также по вопросам урегулирования.

Problems of Property Relations State Regulation at the Current Stage of Development of the RA Economy

Dissertation submitted for pursuing of the scientific degree of PhD of Economics in the field of 08.00.01- «General Economics».

The defense of dissertation will take place on February 17th, 2020 at 13:30 at the meeting of Specialized Council 015 in Economics of Supreme Certifying Committee of the RA acting at the Yerevan State University.

Address: 52 Abovyan str., Yerevan, 0009, Armenia.

SUMMARY

The relevance of the research topic is due to the development of social relations, the evolution of which does not leave unchanged the character of development of various spheres of human activity. Moreover, changes in property relations are becoming more pronounced from a social, political, legal and, of course, economic point of view. An analysis of the features and changes in the content of property relations reflects economic problems and the possibilities for solving them in separate countries, allows predicting the results of reforms, and also identifying the potential for economic development of countries.

The object of the research is property relations. The subject of the research is the development of property relations in the Republic of Armenia in the process of their implementation and state regulation. The purpose of the research is to study the nature of property relations, the patterns of their development, taking into account historical and socio-economic trajectories, as well as to substantiate the directions of regulation of property relations in the Republic of Armenia aimed at limiting the negative dynamics of property relations. To achieve the goal of the dissertation, the following research tasks were identified:

- ✓ to study the concept of "property", the property relations, to reveal features of property relations and define their place in the system of social relations,
- ✓ to consider the implementation of property relations in dynamics and propose indicators characterizing their development,
- ✓ to consider the role of the tax system as an instrument for regulating the development of property relations in the system of economic functions of the state, to identify the features of property relations, new forms of expression that correspond to modern economic conditions,
- ✓ to suggest directions of state regulation of the development of property relations in the RA,

- ✓ to identify factors of development of property relations and present a policy of state regulation of qualitatively new property relations in the economy of the Republic of Armenia.

The scientific result of the dissertation is based on a scientifically based research of property relations, which develops ideas about the content, evolution and dynamics of property relations in modern conditions. The main provisions of scientific novelty in the work are as follows:

1. Clarified the definitions of property and property relations in the framework of socio-economic interpretation.
2. A synthesized research approach is proposed within the framework of existing methodological approaches.
3. The tool for balancing the interests of the subjects of property relations in the process of their development has been identified and justified. This is a set of government regulation measures implemented through the tax system.
4. The definition of democratization of property relations is presented.
5. The features of the implementation of a number of objects of property relations - intellectual and virtual property - have been revealed.
6. Highlighted the qualitative states of the development of property relations, which ensure the transition to the next level of development of property relations.
7. The conditions that influence the process of realizing property relations are identified, which ensure the continuity of the process of realizing property relations, and thereby the directions of state regulation of property relations are set out.
8. The factors of the development of property relations have been identified: the development of human capital, the education system, information technology, their relationship and the relationship with the state regulation system.

The theoretical and practical significance of the research lies in the fact that the dissertation deepens existing research in the field of development of property relations. Theoretical provisions and conclusions formulated in the thesis are aimed at improving the process of state regulation of property relations. The author's suggestions can be used for further research on the implementation and development of property relations, as well as on settlement issues.